



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության
վարչական դատարանի վճիռ
Նախագահող դատավոր Ա. Թովմասյան

Վարչական գործ թիվ ՎԴ/7373/05/13

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

«8» հուլիսի 2014թ.

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը (այսուհետ՝
վերաքննիչ դատարան), հետևյալ կազմով՝

Նախագահող դատավոր Քրիստինե Մկոյան,
դատավոր Արթուր Առաքելյան,
դատավոր Գալուստ Ղարիբյան,

Մասնակցությամբ՝
հայցվորի ներկայացուցիչ Սուրեն Բաղրամյանի,

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Մուայադ Ռաֆիկի Աբբասի
ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական
ծառայության՝ 12.07.2013թ. թիվ Դ-17/13-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի
մասին, թիվ ՎԴ/7373/05/13 վարչական գործով Հայաստանի Հանրապետության
վարչական դատարանի 14.03.2014թ. վճռի դեմ Մուայադ Ռաֆիկի Աբբասի
(ներկայացուցիչ Սուրեն Բաղրամյան) կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Մուայադ Ռաֆիկի Աբբասը (ներկայացուցիչ Սուրեն Ռոբերտի Բաղրամյան)
20.08.2013թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան /այսուհետ՝
Դատարան/՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական
ծառայության՝ 12.07.2013թ. թիվ Դ-17/13-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի
մասին:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Ա.Թովմասյան) 24.08.2013թ. որոշմամբ
հայցադիմումը ընդունվել է վարույթ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական
ծառայության կողմից 21.02.2013թ. ներկայացվել է հայցադիմումի պատասխան:

Դատարանի 14.03.2014թ. վճռով Մուսյադ Ռաֆիկի Աբասի հայցը մերժվել է:
Թիվ ՎԴ/7373/05/13 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 14.03.2014թ. վճռի դեմ Մուսյադ Ռաֆիկի Աբբասի (ներկայացուցիչ Սուրեն Ռոբերտի Բաղդամյան) կողմից 08.04.2014 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը վերաքննիչ դատարանի 28.04.2014թ. որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Դատաքննությունը հայտարարվել է ավարտված 17.06.2014 և դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 08.07.2014թ.:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբեր գտնում է, որ դատարանը չի կիրառել «Մարդու իրավունքների հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի, «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի 33-րդ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածների մեկնաբանությունների, «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 6-րդ, 8-րդ, 21-րդ, 37-րդ, 38-րդ, 55-րդ, 57-րդ, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ, 45-րդ, 49-րդ, 51-53-րդ, 56-րդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 43-րդ հոդվածների, ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008թ. թիվ ՎԴ/0016/05/08 որոշմանը արտահայտած իրավական դիրքորոշումների, ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի, 1951թ. կոնվենցիայի ծանոթագրություն 1-ին, 33-րդ հոդվածի 1-ին կետի, 2-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին կետի, Փախստականների մասին Վիեննայի կոնվենցիայի 1. 1949 թվականի օգոստոսի 12-ի ժնկի կոնվենցիաների և միջազգային զինված հակամարտությունների զոհերի պաշտպանության վերաբերյալ լրացուցիչ արձանագրության 2, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի, նախադեպային հետևյալ որոշումների 1. Klass v. Germany, պարբերություն 42 (1978թ.), 2. Winterwerp v The Netherlands³, 3. Attorney General v. Zaoui⁴, 4. Silver v. United Kingdom (1983թ.), 5. Chahal v. United Kingdom⁵, 6. Soering v. United Kingdom⁶, 7. Ireland v. United Kingdom⁷ պահանջները, որոնք որ պարտավոր էր կիրառել:

Դատարանը չի կիրառել նաև ՄԱԿ ՓԳԾ-ի Գործադիր կոմիտեի թիվ 6 եզրակացության 8, ՄԱԿ ՓԳԾ-ի 16.12.1998 թ-ի փախստականի կարգավիճակի տրամադրման դիմումի ապացուցման բեռի և ստանդարտի վերաբերյալ բացատրական գրության, Paul Weis, The Refugee Convention, 1951, Lauteipacht and Bethlehem, վերոնշյալ ծանոթագրություն 10, կետ 147-ի, 159-ի, 167-169-ի, 176-ի, Walter Kalin, Das Prinzip des Non-refoulement, Europäische Hochschulschriften Bd./Vol. 298, էջ 131, պահանջները:

Նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները, գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները և դրանց հետևանքով գործի վերանայման հիմքերը կայանում են հետևյալում՝

1. Պատասխանողի կողմից իրականացված վարչարարությունը.

Սիրիայի Արաբական Հանրապետությունում պատերազմի պատճառով Մուսյադ Ռաֆիկի Աբբասը (այսուհետ նաև Հայցվոր) չի կարողացել վերադառնալ այնտեղ, քանի որ Սիրիայի Արաբական Հանրապետություն վերադառնալու դեպքում Հայցվորի կյանքը



վտանգված կլինեն, որպիսի վախի համար էլ 06.02.2013 թ.-ին դիմել է ՀՀ Տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությանը (այսուհետ Պատասխանող) ՀՀ-ում իրեն ապաստան տրամադրելու համար:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի Պատասխանողը սույն վեճով հանդիսանում է վարչական մարմին, իսկ Որոշումը կայացնելով իրականացրել է վարչարարություն, որով սահմանափակվել ու վաթարացվել է Հայցվորի ՀՀ օրենսդրությամբ և միջազգային կոնվենցիաներով ամրագրված իրավունքները:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածն ամրագրում է՝

«Սույն օրենքի իմաստով ապաստանի տրամադրման ընթացակարգ է համարվում լիազոր մարմնի կողմից իրականացվող փախստականի ճանաչման և ապաստանի տրամադրման վարչական վարույթը: /Մաս 1-ին/

Ապաստանի տրամադրման ընթացակարգն իրականացվում է «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ: /Մաս 2-րդ/»

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը, որոնց լիազորությունները սահմանված են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում իրավական այլ ակտերով:

Իսկ «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում էլ նշված է, որ վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինի պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը սահմանում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Համաձայն «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշումը:

Բողոքաբերը նշում է, որ ոշումն ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ որոշումը չունի պատճառաբանական մաս, քանի որ վիճարկվող որոշման առումով պատճառաբանական մասն ունի խիստ կարևոր նշանակություն վարչական ակտի իրավաչափության գնահատման տեսանկյունից, քանի որ համաձայն «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին կետի գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշումն ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասի արգելվում է կատարել անորոշ հղումներ, իսկ հոդվածներին միայն հղում կատարելը բավարար չէ, իսկ ինչ վերաբերվում է որոշման մեջ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի վկայակոչմանը, բողոքաբերը նշում է, որ



Պատասխանողի կողմից բացարձակապես չի պահպանվել «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի և ոչ մի դրույթ:

Ըստ բողոքաբերի, անհերքելի է այն փաստը, որ Պատասխանողը պարզապես վկայակոչել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, սակայն Պատասխանողի կողմից ինչպես պահանջում է «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը, չի պահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, չի բացահայտել գործի բոլոր, այդ թվում Հայցվորի օգտին առկա հանգամանքները:

Ինչ վերաբերվում է ԹԻՎ 2/2/3-714 գրությանը, ապա այն առանց Հայցվորի վտանգավոր լինելու հանգամանքը հիմնավորող ապացույցների, չի կարող Հայցվորի ապաստանի տրամադրումը դադարեցնելու հիմք հանդիսանար: Ավելին, հենց «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջից էլ է ակնհայտ, որ անձի վտանգավոր լինելու հանգամանքը պետք է հիմնված լինի հիմնավոր ապացույցների, այլ ոչ թե ենթադրությունների վրա: Բացի այդ չկա որևէ ապացույց այն մասին, որ Հայցվորը դատապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար:

Ավելին բողոքաբերը գտնում է, որ Պատասխանողը որոշումը կայացնելու ժամանակ առհասարակ անդրադարձ չի կատարել «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի 33-րդ և «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածներում ամրագրված չվերադարձվելիության սկզբունքի կիրառման և այլ բացառելու հարցերին, որն ուղղակի կոնվենցիայի և ՀՀ օրենսդրության պահանջների հրամայականն է:

Պատասխանողի կողմից չի բերվել և ոչ մի ՀՀ օրենսդրության տրամաբանությունից բխող հիմնավորում և ապացույց, որ որոշումը կայացնելու համար իրականացված վարչական վարույթի համար առկա է եղել «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-4-րդ մասերով նախատեսված որևէ հիմք:

ՀՀ վճռաբեկ դատարանը 26.12.2008 թ.ին կայացված թիվ ՎԴ/0016/05/08 որոշմամբ արտահայտած է դիրքորոշում, որ առանց լսումների միջամտող վարչական ակտի կայացումը հիմք է վարչական ակտը ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու համար:

Նշվածը վկայում է այն մասին, որ Պատասխանողի կողմից Որոշումը կայացնելու համար իրականացված վարչական վարույթի ընթացքում չի պահպանվել վարույթի ընթացակարգային հարցերը և պատասխանողի կողմից չի իրականացվել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան վարչարարություն, պատասխանողի կողմից չի պարզվել և բացահայտվել Հայցվորի Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար այդպես կոչված հիմնավոր պատճառներով «վտանգավոր» լինելու հանգամանքը, չի եղել անհապաղ վարչական ակտ կայացնելու անհրաժեշտություն, չի կիրառել չվերադարձվելիության սկզբունքին առնչվող դրույթները:

Բողոքաբերը գտնում է, որ կարելի է արձանագրել, որ որոշման մեջ պատասխանողի նշված ակտի ընդունման հիմնավորումը հակասում է ՀՀ օրենսդրության իմպերատիվ պահանջներին, քանի որ պատասխանողի կողմից սխալ է կիրառվել և մեկնաբանվել «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի և նույն օրենքի 53-րդ հոդվածի պահանջները: Ինչպես նաև պատասխանողը որոշումը կայացնելիս չի կիրառել ՀՀ Սահմանադրության 5-րդ



«Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի 33-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 6-րդ, 8-րդ, 21-րդ, 37-րդ, 38-րդ, 55-րդ, 57-րդ, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 6-րդ, 9-րդ, 11-րդ, 45-րդ, 49-րդ, 51-53-րդ, 56-րդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 43-րդ հոդվածների պահանջները, ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թ.-ի թիվ ՎԴ/0016/05/08 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, որոնք որ պարտավոր էր կիրառել:

Դատարանն անտեսելով պատասխանողի կողմից ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող վարչարարություն իրականացնելու և ընթացակարգային հարցերը չպահպանելու հանգամանքը, վճռում նշելով «Դատարանը գտնում է, որ պատասխանողը գործել է վերը նշված նորմերին համապատասխան ուսումնասիրելով 30.05.2013 թվականի Հայաստանի Հանրապետության Կառավարության առընթեր Ազգային Անվտանգության Ծառայություն ՀՀԳՎ պետի թիվ 2/2/3-714 գրությունը հանգել է գործի ճիշտ լուծման:» նախադասությունը հաստատել է իրենց կողմից նյութական և դատավարական իրավունքի կոպիտ խախտում թույլ տալու հանգամանքը Դատարանը սույն գործի փաստական հանգամանքները չի պարզել է ի պաշտոնե ("ex officio"):

2. Դատարանը Վճիռը կայացնելիս չի կիրառել «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի 33-րդ և «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածներում ամրագրված չվերադարձվելիության սկզբունքը:

Բողոքաբերը վկայակոչել է «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի 33-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը և «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ի և 3-րդ մասերը:

Ըստ բողոքաբերի, նշված հոդվածների վերլուծությունից պարզ է, որ միայն ենթադրությունն այն մասին, որ անձին արտաքսելով, վերադարձնելով կամ հանձնելով իր ծագման երկիրը, որտեղ հիմնավոր պատճառով վտանգ կա, որ նա կենթարկվի դաժան և անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ խոշտանգումների, բավարար է որպեսզի փախստականի կարգավիճակ հայցող անձին արգելվի այդ երկիր արտաքսելը, վերադարձնելը կամ էլ հանձնելը:

Սույն գործով բողոքաբերը գտնում է, որ ոչ միայն պատասխանողը իրականացված վարչարարության ընթացքում անդրադարձ չի կատարել չվերադարձվելիության սկզբունքին, այլ նաև Դատարանը վճիռը կայացնելիս:

2.1. «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի 33-րդ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածների մեկնաբանությունները:

Հայցվորի պարագայում առկա չէ «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի 33-րդ հոդվածի (այսուհետ նաև՝ 33-րդ հոդված) 1-ին մասի չկիրառման հանգամանքը:

Դատարանն իր հերթին վճռում չի նշել 33-րդ հոդվածի 1-ին մասի չկիրառման հիմնավորում, ինչը նշանակում է, որ 33-րդ հոդվածի 1-ին մասը սույն վճռով կիրառելի է, իսկ ինչ վերաբերվում է 33-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ վճռում նշվածին, ապա այն պարզապես անտրամաբանական անհեթեթություն է և զուրկ օրենսդրական որևէ հիմնավորումից:

Չվերադարձվելիության պարտավորությունն ըստ 33-րդ հոդվածի 1-ին կետի, 1951թ. Կոնվենցիայի նպատակը, որը հստակորեն ամրագրված է դրա նախաբանում,



կայանում է փախստականների հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության մեջ: 33-րդ հոդվածը համարվում է 1951թ. Կոնվենցիայի հիմնաքարը, որով ամրագրվում է փախստականների չվերադարձվելիության սկզբունքը: 33-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն պայմանավորվող պետությունները չեն կարող «փախստականին վտարել կամ որևէ կերպ վերադարձնել այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը վտանգ կսպառնար իր ռասայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի պատկանելու կամ քաղաքական կարծիքի հարելու հիմքով»:

Վերապահումները 33-րդ հոդվածի նկատմամբ հատկապես արգելվում են ինչպես Կոնվենցիայի, այնպես էլ Արձանագրության դրույթներով: Չվերադարձվելիության սկզբունքը «հիմնարար մարդասիրական սկզբունք» է, որը ստացել է սովորության միջազգային իրավունքի կարգավիճակ:

Դեպի հետապնդման վտանգ ներկայացնող վայր վերադարձվելու արգելքը, որը սահմանված է փախստականներին առնչվող միջազգային իրավունքի դրույթներով, միանգամայն կիրառելի է էքստրադիցիայի համատեքստում: Դա պարզ է դառնում 33-րդ հոդվածի 1-ին կետի ձևակերպումից, որում վտարումը կամ վերադարձը ուղեկցվում են «որևէ կերպ» արտահայտությամբ: Այսպիսով, 1951թ. Կոնվենցիայի 33րդ հոդվածի 1-ին կետով հետախուզման մեջ գտնվող անձի հանձնումն արգելված է, եթե այն վերածվում է հարկադիր վերադարձի:

1951թ. Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ կետը նախատեսում է բացառություն չվերադարձվելիության պարտավորությունից երկու իրավիճակներում. (1) երբ «հիմնավոր պատճառներով (փախստականը) վտանգավոր է համարվում այն երկրի անվտանգության համար, որտեղ նա գտնվում է» և (2) երբ փախստականը «վերջնական դատավճռով դատապարտված լինելով առանձնապես ծանր հանցագործության համար վտանգ է ներկայացնում այդ երկրի հասարակության համար»: Սույն եզրակացությունում շեշտը դրվում է այս երկու բացառություններից առաջինի վրա:

Բողոքաբերը գտնում է, որ պատասխանողը 21.06.2013թ. հայցվորին Հայաստանի Հանրապետությունում փոխստական ճանաչելու և ապաստան տրամադրելու մասին թիվ Բ-141/13-Ա որոշումն է կայացրել, վկայում է այն մասին, որ հայցվորի պարագայում կիրառելի է 33-րդ հոդվածի 1-ին կետի հրամայականը, ինչը Դատարանի կողմից վճիռը կայացնելիս անտեսվել է:

33րդ հոդվածի 2-րդ կետի բացառիկ բնույթը.

Իրավունքի ընդհանուր սկզբունք է համարվում այն, որ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերում ամրագրված բացառությունները պետք է մեկնաբանվեն նեղ իմաստով: 15:33-րդ հոդվածի 2-րդ կետը հանդես է գալիս որպես բացառություն 1-ին կետում ամրագրված ընդհանուր սկզբունքից, և բոլոր այլ բացառությունների օրինակով՝ պետք է մեկնաբանվի նեղ իմաստով: Ամեն պատճառ չէ, որ կարող է վկայակոչվել որպես ազգային անվտանգության նկատառում: Այսպիսով, թեև պետություններին վերապահված է սեփական հայեցողության շրջանակ 33-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված բացառությունները կիրառելիս, սակայն նման շրջանակն անսահմանափակ չէ:

Հարկադիր վերադարձը հիմնավորող վտանգի բնույթը.

33-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված «վտանգը» պետք է սպառնա այն երկրի անվտանգությանը, որտեղ գտնվում է տվյալ փախստականը: Պետք է նաև լինեն ողջամիտ հիմքեր համարելու, որ տվյալ անհատը վտանգ է ներկայացնում:

«Երկրի անվտանգությանը սպառնացող վտանգ» տերմինի գործածումը ենթադրում է, որ վտանգի լրջությունը պետք է հասնի բավականին բարձր չեմի: Նշվածը



վերաբերվում է միայն երկրի անվտանգությանը սպառնացող նշանակալից վտանգներով: Երկրի անվտանգությանը սպառնացող վտանգի մասին դրույթի ներառման հիմքում ընկած մտահոգությունների բնույթը գետեղված է Միացյալ Թագավորության ներկայացուցչի հետևյալ հայտարարությունում.

«Փախստականների մեծ զանգվածի պարագայում անխուսափելի է դառնում որոշ անձանց գաղթակցությունը զբաղվելու այլ ուժի անունից այնպիսի գործունեությամբ, որն ուղղված կլինի իրենց ապաստան տված երկրի դեմ, և ողջամիտ չէր լինի ակնկալել, որ վերջինս միջոցներ չի ձեռնարկի իրեն նման իրավիճակից զերծ պահելու համար»:

Անհրաժեշտ է դիտարկել, որ հարկադիր վերադարձի արգելքի հիմնարար բնույթը և 1951թ. Կոնվենցիայի մարդասիրական բնույթն ավելի ընդհանուր իմաստով պետք է դիտարկվի որպես բարձր շեմ Կոնվենցիայի բացառությունների կիրառման համար: Արդյունքում, 33-րդ հոդվածի 2-րդ կետի նկատառումով երկրի անվտանգությանը սպառնացող վտանգը պետք է դիտարկվի որպես շատ լուրջ վտանգ, այլ ոչ թե որպես պակաս լուրջ վտանգ: Այս դրույթը նաև պայմանավորված է տվյալ անձից բխող ապագա վտանգի գնահատմամբ, այլ ոչ թե անցյալում նրա կողմից որևէ արարք գործելու նկատառումով:

Բողոքաբերը անհրաժեշտ է համարում նշել նաև, որ երկրի անվտանգությունը վկայակոչվում է բավականին լուրջ բնույթի արարքների դեպքում, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վտանգում են սահմանադրությունը, կառավարությունը, տարածքային ամբողջականությունը, անկախությունը և համապատասխան երկրի արտաքին խաղաղությունը:

33-րդ հոդվածի 2-րդ կետն ընդգրկում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են ընդունող պետության կառավարության հեղաշրջման փորձերը բռնության գործադրմամբ կամ այլ ապօրինի միջոցներով, գործողությունները մեկ այլ պետության դեմ, որոնք կարող են ընդունող պետության նկատմամբ պատասխան պատժամիջոցների պատճառ դառնալ, ահաբեկիչ գործողությունները և լրտեսությունը, ինչպես նաև այն, որ երկրի անվտանգությանը սպառնացող վտանգի պահանջը կարող է միայն նշանակել, որ տվյալ փախստականը լուրջ վտանգ պետք է ներկայացնի այդ պետության հիմքերի կամ բուն գոյության համար, որպեսզի թույլատրելի լինի նրա վերադարձն այն երկիր, որտեղ վերջինս կարող է հետապնդումների ենթարկվել:

33-րդ հոդվածի 2-րդ կետի «իր գտնվելու վայրի երկրի» արտահայտությունը վերաբերում է ապաստան տված երկրին: Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսում է, որ պայմանագիրը պետք է մեկնաբանվի բարեխղճորեն՝ պայմանագրի դրույթներին իրենց համատեքստում հաղորդվող սովորական նշանակությանը և պայմանագրի նպատակներին համապատասխան:

Հիմնավոր պատճառներ հասկացության տակ անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ 33-րդ հոդվածի 2-րդ կետով մասնակից պետությունները պետք է ապացուցեն, որ գոյություն ունեն «հիմնավոր պատճառներ» փախստականին որպես ապաստան տված երկրի անվտանգությանը սպառնացող վտանգ դիտարկելու համար: Վտանգավոր լինելու մասին եզրակացությունը կարող է հիմնավորված լինել, եթե այն բավարար չափով հիմնված է հուսալի և արժանահավատ ապացույցների, այլ ոչ թե ենթադրությունների վրա:

Համապատասխան մարմինները պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն ապագայում վտանգի գոյության հարցին, և նրանց եզրակացությունը պետք է հիմնավորված լինի ապացույցներով:



Նոր Ձեւանդիայի վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ հայտարարել է, որ 33-րդ հոդվածի 2-րդ կետի «հիմնավոր պատճառների» մասին պահանջը նշանակում է, որ համապատասխան պետությունը չի կարող գործել կամայականորեն կամ քնահաճորեն և պետք է հատուկ անդրադառնա ապագա վտանգի հարցին, իսկ համապատասխան եզրակացությունը պետք է հիմնավորված լինի ապացույցներով:

Նշվածը Կոնվենցիայի տրամաբանությունից բխող եվրոդատարանի դատական ակտերով արտահայտած դիրքորոշումն է, ինչը չի կարելի ասել պատասխանողի կողմից իրականացված վարչարարության մասին, քանի որ պատասխանողի կողմից չի ապացուցվել հայցվորի Հայաստանի Հանրապետության անվտանգությանը սպառնացող վտանգի գոյություն ունենալու «հիմնավոր պատճառներ» դիտարկելու համար: Ինչ վերաբերվում է Թիվ 2/2/3-714 գրությանը, ապա այն չի հանդիսանում հայցվորի Հայաստանի Հանրապետության անվտանգությանը սպառնացող վտանգի գոյություն ունենալու «հիմնավոր պատճառներ» դիտարկելու համար հուսալի և արժանահավատ ապացույց, քանի որ այն հիմնված է ենթադրությունների վրա, այլ ոչ թե արժանահավատ և հավաստի ապացույցների վրա:

Բողոքաբերը գտնում է, որ այս հանգամանքը ևս անտեսվել է Դատարանի կողմից, քանի որ այն քննարկման առարկա չի դարձրել և չի տվել այդ հանգամանքի վերաբերյալ որևէ պատճառաբանություն:

Համաչափությանն առնչվող նկատառումներ.

Մարդու իրավունքների երաշխիքներից ցանկացած այլ բացառության օրինակով՝ 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված չվերադարձվելիության սկզբունքով նախատեսված պաշտպանությունից բացառությունը պետք է կիրառվի դրա նպատակին համաչափ կերպով: Համաչափության նկատառումը հանդես է գալիս որպես կարևոր երաշխիք 33-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառման առումով: Այն իրենից ներկայացնում է մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար սկզբունք:

1951 թվականի Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ կետի համատեքստում համաչափությունը հիմնավորելու համար պահանջվում է

1. խելամիտ կապ երկրի տարածքից փախստականի հեռացման և վտանգի վերացման միջև,

2. հարկադիր վերադարձը պետք է հանդես դա որպես վտանգը վերացնելու վերջին հնարավոր միջոց,

3. ապաստան տրամադրած երկրին սպառնացող վտանգը պետք է ավելի մեծ լինի, քան հարկադիր վերադարձի դեպքում փախստականին սպառնացող վտանգը:

33-րդ հոդվածի 2-րդ կետով հարկադիր վերադարձը հիմնավորելու համար բողոքաբերը գտնում է, որ հարկավոր է «խելամիտ կապ» միջոցների, այն է՝ հարկադիր վերադարձին նպատակների, այն է՝ անվտանգությանը սպառնացող վտանգի վերացման կամ մեղմացման միջև: Փախստականի հեռացումը երկրի տարածքից պետք է բարերար ազդեցություն ունենա տվյալ հանրային շահերի վրա: Եթե հարկադիր վերադարձը չունենա նման բարերար ազդեցություն, ապա այն չի կարող հիմնավորվել 33-րդ հոդվածի 2-րդ կետով:

Նման «խելամիտ կապ»-ի գոյությունը հիմնավորելու համար պետությունը պետք է ապացուցի, որ փախստականի ներկայությունը կամ գործունեությունը պետությունում վտանգ են ներկայացնում ապաստան տրամադրած երկրի անվտանգության համար, իսկ տվյալ անհատի հեռացումը երկրի տարածքից կվերացնի կամ կմեղմացնի այդ վտանգը: Տվյալ անհատի, ապաստան տրամադրած երկրի անվտանգությանը սպառնացող հնարավոր վտանգի և նշված անհատի հարկադիր վերադարձից հետո վտանգի զգալի



մեղմացման միջև պետք է լինի իրական կապ: Եթե տվյալ անհատի հեռացումը երկրի տարածքից չապահովվի այս նպատակի իրագործումը, ապա հարկադիր վերադարձը չի կարող համարվել հիմնավոր:

Հայցվորը գտնում է, որ հարկադիր վերադարձը պետք է լինի ապաստան տրամադրած երկրի անվտանգությանը սպառնացող վտանգի վերացման վերջին հնարավոր միջոցը: Փախստականի վերահանձնումը նրան հետապնդողներին պետք է հանդիսանա երկրի անվտանգությանը սպառնացող վտանգը վերացնելու միակ հնարավոր միջոց: Պակաս սահմանափակող և հավասարապես արդյունավետ միջոցների, օրինակ, ապաստան տված երկրում քրեական հետապնդման, տեղաշարժի ազատության սահմանափակման, երրորդ երկիր տեղափոխման հնարավորության դեպքում հարկադիր վերադարձը չի կարող հիմնավորված համարվել 33-րդ հոդվածի 2-րդ կետով:

Բողոքաբերը գտնում է, որ 33-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառման մասին որոշում կայացնելիս անհրաժեշտ է կշռադատել տվյալ անհատի ներկայացրած վտանգի լրջությունը՝ համեմատելով այն հարկադիր վերադարձի հնարավոր հետևանքների, այդ թվում՝ երկյուղի առարկա հանդիսացող հետապնդման աստիճանի հետ: Եթե հավանականություն կա, որ դիմումատուն կենթարկվի խիստ հետապնդման, ապա վերադարձը հիմնավորելու համար երկրի անվտանգությանը սպառնացող վտանգը պետք է շատ լուրջ լինի:

Նշված մեկնաբանությունների լույսի ներքո ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ առկա չի եղել հայցվորի նկատմամբ 33-րդ հոդվածի 2-րդ կետի բացառիկ բնույթի որևէ հիմքի կիրառումը, այսինքն բացակայել է

-հարկադիր վերադարձը հիմնավորող վտանգի բնույթը,

-33-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված «վտանգը»-ի ողջամիտ հիմքերը,

-Հայաստանի Հանրապետության անվտանգության համար սպառնացող վտանգը,

-Հայցվորի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության հեղաշրջման վարձերի կատարումը,

-Հայցվորի կողմից ապօրինի միջոցներով և գործողություններով մեկ այլ պետության կառավարության հեղաշրջման փորձերը, որոնք կարող էին Հայաստանի Հանրապետության պատասխան պատժամիջոցների պատճառ դառնալ,

-Հայցվորի կողմից ահաբեկիչ գործողությունների և լրտեսություն կատարելու գործողությունների կատարումը,

-Հայցվորի Հայաստանի Հանրապետության համար վտանգավոր լինելու հիմնավոր պատճառները,

-Հայցվորի հարկադիր վերադարձի արդյունքում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության վրա բարերար ազդեցություն ունենալու «խելամիտ կապ» միջոցը,

-Հայցվորի հարկադիր վերադարձը վերջին միջոց լինելու հանգամանքը,

-միաբաժանակյա հայցվորի հարկադիր վերադարձի հետ կապված ռիսկերի ավելի նվազ լինելու և Հայաստանի Հանրապետության համար վտանգի ավելի մեծ լինելու առկայությունը:

Բողոքաբերը գտնում է, որ դատարանը պարտավոր էր Վճռում «վերը-նշվածից պարզ է դառնում, որ պատասխանողն իրավաչափորեն նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայցվորը վտանգ է ներկայացնում ՀՀ ազգային անվտանգությանը և նկատի ունենալով, որ նշվածը հիմք է հանդիսանում փախստականի կարգավիճակի դադարեցման համար կայացրել է հայցվորին Հայաստանի Հանրապետությունում տրամադրված ապաստանը դադարեցնելու մասին թիվ Դ-17/13-Ա որոշումը» և «վսյինքն

նման պայմաններում վերանում է «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի արտոնությունից օգտվելու հայցվորի իրավունքը և պայմանավորվող պետության կողմից վտարելուն վերադարձի արգելքը, այնքանով, որքանով ստացված տեղեկությունների համար վերջինս վտանգ է սպառնում Հայաստանի Հանրապետության համար, որի պայմաններում գործում է նույն կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասը:» վերլուծությունները նշելուց առաջ բերել հանգամանալից հիմնավորում այն մասին, որ հայցվորն իրականում Հայաստանի Հանրապետության անվտանգության համար ներկայացրել է այնպիսի վտանգ, որ նրա նկատմամբ կիրառելի է եղել 33-րդ հոդվածի 2-րդ կետի, այլ ոչ թե 33-րդ հոդվածի 1-ին կետի հրամայականը:

Այս ամենը վկայում է այն մասին, որ Դատարանը վճռում ձևականորեն է նշել Կոնվենցիան. քանի որ նա այդ մասով ասելիք չի ունեցել, ինչը Դատարանի կողմից նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման ևս մեկ հիմնավորում է հանդիսանում:

Հայցվորը գտնում է, որ 33-րդ հոդվածի կիրառման մասին որոշումները չպետք է հիմնված լինեն այնպիսի ապացույցների վրա, որոնք տվյալ փախստականը վիճարկելու հնարավորություն չունի. քանի որ դրանով կխախտվեն արդարության և բնական արդարադատության սկզբունքները: Նման որոշումներ կայացնելիս չի կարելի հիմնվել գաղտնի ապացույցների կամ խորհրդապահական կարգով քննված (երբ էությունը նույնպես չի բացահայտվում) ապացույցների վրա:

Այստեղ կարող է առաջանալ բախում լիարժեք բացահայտման սկզբունքի հետ, երբ ապացույցների աղբյուրը և/կամ էությունը բացահայտելը կարող է վնաս հասցնել ազգային անվտանգության շահերին: Այդուհանդերձ, նման շահերը կարող է պաշտպանվել ընթացակարգային այնպիսի երաշխիքների գործադրմամբ, որոնք կհարգեն նաև փախստականի պատշաճ իրավական ընթացակարգի իրավունքները:

Բողոքաբերը նշում է, որ ՀՀ կառավարության առընթեր Ազգային անվտանգության ծառայության 2013 թվականի մայիսի 30-ի թիվ 2/2/3-714 գրությանը համարվում է գաղտնի ապացույց, քանի որ որոշումը հիմնված է եղել թիվ 2/2/3-714 գրության վրա, որը հայցվորը վիճարկելու հնարավորություն չունի և չի էլ ունեցել: Հետևաբար միանշանակ է, որ դրանով խախտվել է արդարության և բնական արդարադատության սկզբունքները, քանի որ վիճարկվող որոշումը կայացնելիս պատասխանողը չի կարող հիմնվել գաղտնի ապացույցների և խորհրդապահական կարգով քննված ապացույցների վրա:

Բողոքաբերը գտնում է, որ սույն գործով բախում է առաջացել լիարժեք բացահայտման սկզբունքի հետ, քանի որ նախ վիճարկվող որոշումը կայացնելու հիմքը հանդիսացել է գաղտնի ապացույցը, որը վիճարկելու հնարավորությունից զրկված է եղել հայցվորը: Ավելին պատասխանողը հայցվորին որպես վարչական վարույթի կողմ մասնակից չի դարձրել, որով խախտվել է հայցվորի ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված մի շարք իրավունքներ: Ասվածի հիմնավորումը մանրամասն կերպով արձանագրված է եվրոպական դատարանի նախադեպային որոշմամբ *Chahal v. United Kingdom*:

Հաշվի առնելով նշվածը և Կոնվենցիայի տրամաբանությունն ու պահանջը, միանշանակ կարելի է արձանագրել, որ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության 2013 թվականի մայիսի 30-ի թիվ 2/2/3-714 գրությունը, ինչպես պատասխանողի կողմից որոշումը կայացնելու համար իրականացված վարչարարության, այնպես էլ դատական քննության համար վերաբերելի ապացույց չի հանդիսացել:



ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության 2013 թվականի մայիսի 30-ի թիվ 2/2/3-714 գրությունը չի հանդիսանում եզրակացություն:

ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության 2013 թվականի մայիսի 30-ի թիվ 2/2/3-714 գրությամբ չի հիմնավորվել և հիմնավորվում հայցվորի Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար հիմնավոր պատճառներով «վտանգավոր» ներկայացնելու հանգամանքը:

Հայցվորը գտնում է, որ դատարանը պարտավոր էր չանտեսեր այս էական նշանակություն ունեցող հանգամանքները, սակայն ինչպես տեսնում ենք անտեսվել է պատասխանողի կողմից վարչարարության ընթացակարգային հարցերի շրջանցման հանգամանքը:

Բացի այդ Կոնվենցիայի տրամաբանության մեջ առկա չէ «պոտենցիալ» վտանգ ներկայացնելու հասկացողությունը:

3. Որոշումն անվավեր ճանաչելու հիմնավորումները և Դատարանի կողմից թույլ տրված նյութական իրավունքի նորմերի խախտումները.

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի բացարձակ և պարտադիր լինելու բնույթը.

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը բացարձակ կերպով արգելում է անհատի հարկադիր վերադարձն այնտեղ, որտեղ էական հիմքեր կան ենթադրելու, որ նրան սպառնում է խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկվելու վտանգը: Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դրույթների ուժը բխում է այն հանգամանքից, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կարծիքով այն ընդգրկում է եվրոպայի խորհուրդը կազմող ժողովրդավարական հասարակությունների հիմնարար արժեքներից մեկը:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը թվարկվում է նույն կոնվենցիայի 15-րդ հոդվածի 2-րդ կետում որպես Կոնվենցիայի դրույթ, որից շեղում չի թույլատրվում: Ուստի, այդ դրույթը պետք է պահպանվի նույնիսկ պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ: Ավելին, ի տարբերություն Կոնվենցիայում ներառված այլ իրավունքների և ազատությունների՝ 3-րդ հոդվածը չի թույլատրում օրենքով նախատեսված այլ սահմանափակումներ որևէ հանգամանքներում՝ անկախ անվտանգության, հասարակական կարգի կամ այլ նկատառումներից: Ուստի, 3-րդ հոդվածը գերակայում է նույնիսկ այն հանգամանքներում, երբ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ կետը կիրառելի է համարվում, կամ երբ փախստականի կարգավիճակի մերժման համար կիրառելի են համարվում 1951 թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածի «Չ» կետի բացառման հիմքերը:

Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության (Chahal v. United Kingdom) գործում Միացյալ Թագավորության կառավարությունը որոշել էր արտաքսել դիմումատուին այն հիմնավորմամբ, որ վերջինս վտանգ է ներկայացնում Միացյալ Թագավորության ազգային անվտանգության համար, չնայած այն ապացույցների, որ Հնդկաստան արտաքսվելու դեպքում Չահալը, ամենայն հավանականությամբ, կենթարկվի խոշտանգումների: Միացյալ Թագավորության կառավարությունը փաստարկում էր, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի գործողության անուղղակի սահմանափակում գոյություն ունի, որը իրավունք է չնորհում պայմանավորվող պետությանն արտաքսել որևէ անհատի, նույնիսկ վատ վերաբերմունքի իրական վտանգի առկայության դեպքում, եթե նրա հեռացումը երկրի տարածքից պայմանավորված է ազգային անվտանգության նկատառումներով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշման մեջ հայտարարեց, որ գիտակցում է



«...այն մեծագույն դժվարությունները, որոնք արդի ժամանակներում ծառանում են պետությունների առջև ահաբեկչական գործողություններից իրենց հասարակությունները պաշտպանելու առնչությամբ»: Այնուամենայնիվ, նույնիսկ այդպիսի հանգամանքներում, Կոնվենցիան բացարձակ կերպով արգելում է խոշտանգումը կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ դրանցից տուժողի վարքագծից: ...Տվյալ անձի գործողությունները, անկախ դրանց անցանկալի կամ վտանգավոր բնույթից, չեն կարող նյութական նկատառում հանդիսանալ»:

Բողոքաբերը գտնում է, որ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ պատասխանողը նախքան «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթի կիրառումը նախ և առաջ պարտավոր էր անդրադարձ կատարել «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի 33-րդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ և «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածների պահանջներին, որից հետո, եթե պարզվեր, որ վիճարկվող որոշումը կայացնելու համար կիրառելի է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը, նոր միայն կիրառել այն, ինչը բնականաբար չի կարելի ասել պատասխանողի պարագայում:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածը սահմանում է բացառման, դադարեցման և չեղյալ հայտարարելու ընթացակարգերը, ըստ որի «Այն դեպքերում, երբ առկա է Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականի վերաբերյալ սույն օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով կամ 10-րդ կամ 11-րդ կամ 12-րդ հոդվածներով սահմանված՝ բացառման կամ դադարեցման կամ չեղյալ հայտարարելու պատճառներից որևէ մեկը, լիազոր մարմինը նախաձեռնում է դադարեցման կամ չեղյալ հայտարարելու գործընթաց: /Մաս 1-ին/

Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականի նկատմամբ դադարեցման կամ չեղյալ հայտարարելու ընթացակարգերն իրականացվում են սույն օրենքի 45-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն, ներառյալ՝ հարցազրույցի իրավունքը և լիազոր մարմնի կայացրած որոշման բողոքարկման իրավունքը: Մաս 2-րդ

Դադարեցման կամ չեղյալ հայտարարելու ընթացակարգերի ընթացքում լիազոր մարմինը չպետք է վերանայի սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված «փախստական» հասկացության չափանիշների կիրառելիությունը, այլ որոշումը կայացնելիս հիմք ընդունի սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չվերադարձելիության սկզբունքը: Մաս 3-րդ

Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականը, որի նկատմամբ սկսվել է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ընթացակարգը, շարունակում է ունենալ կոնվենցիոն ճանփորդական փաստաթուղթը՝ սույն օրենքի 30-րդ հոդվածի համաձայն, և մինչև իր գործի վերաբերյալ վերջնական բացասական որոշման կայացումը ամբողջությամբ օգտվում է Հայաստանի Հանրապետության տարածքում ապաստանի իրավունքից: /Մաս 4-րդ/

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է չվերադարձելիության սկզբունքը, որին առհասարակ պատասխանողը չի անդրադարձել, չնայած համաձայն «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ, 7-րդ մասերի և 53-րդ հոդվածի 3-րդ մասի բողոքաբերը գտնում է, որ պատասխանողը որոշումը կայացնելիս պարտավոր էր անդրադառնալ նշված հոդվածին:



«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածն էլ սահմանում է վարչական մարմնի կողմից ապաստան հայցողին խորհրդատվություն տրամադրելու պարտավորության մասին, որը պատասխանողի կողմից որոշումը կայացնելու ժամանակ հայցվորին չի տրամադրվել:

Իսկ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված է «Յուրաքանչյուր ապաստան հայցող, բացառությամբ սույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված անհատական ապաստանի դիմում ներկայացնելուց հրաժարված ընտանիքի անդամների, պետք է մասնակցի լիազոր մարմնի անցկացրած հարցազրույցին: Լիազոր մարմինը կարող է ապաստանի տրամադրման կամ փախստականի ճանաչման մասին որոշում կայացնել առանց հարցազրույցի, եթե տվյալ գործում առկա են բավարար տեղեկություններ այդպիսի որոշում կայացնելու համար:

Սույն օրենքի 56-րդ հոդվածի համաձայն՝ ապաստան հայցողները ապաստանի դիմումի գրանցման օրվանից հետո՝ երեք օրվա ընթացքում, գրավոր ծանուցագրով տեղեկացվում են հարցազրույցի մասին: Ծանուցագիրը ներառում է հարցազրույցի վայրի, ամսաթվի, ժամի և հարցազրույցի մասին այլ տեղեկություններ: Ծանուցագրի ստացումը ապաստան հայցողը հաստատում է իր ստորագրությամբ: Ծանուցագրի և ստացականի պատճենները պահվում են ապաստան հայցողի անհատական գործում:»

Բողոքաբերը վկայակոչել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածը:

Պատասխանողի կողմից խախտվել է նաև «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ, օրենքի 51-րդ և 52-րդ հոդվածների պահանջները, քանի որ որոշումը կայացնելուց առաջ հայցվորի հետ հարցազրույց չի անցկացրել, չի անդրադարձել չվերադարձելիության սկզբունքին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը սահմանում է, թե ովքեր են հանդիսանում վարչական վարույթի մասնակիցները:

Պատասխանողը որոշումը կայացնելու համար իրականացրած վարչարարության ժամանակ հայցվորին որպես վարչական վարույթի մասնակից չի դարձրել, դրանով ոտնահարելով հայցվորի ՀՀ օրենսդրությամբ և կոնվենցիաներով ամրագրված իրավունքները:

Բողոքաբերը վկայակոչում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը և Վերաքննիչ դատարանին հայտնում է, որ պատասխանողի կողմից չի իրականացվել լսումներ և առհասարակ հայցվորը ներգրաված չի եղել որոշումը կայացնելու համար իրականացված վարչարարությանը, ինչը ՀՀ օրենսդրության և հայցվորի իրավունքների կոպիտ խախտում է հանդիսանում, քանի որ սույն գործով առհասարակ առկա չի եղել «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-4-րդ մասերով նախատեսված որևէ հիմք, որովհետև պատասխանողը վարչական վարույթի ընթացքում պարտավոր էր հայցվորին վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու, ապացույց ներկայացնելու և սահմանված այլ իրավունքներից օգտվելու հնարավորություն տար:

Վարչական վարույթն իրականացնող վարչական մարմինը պարտավոր է մինչև վարչական ակտն ընդունելը հնարավորություն տալ վարույթի մասնակիցներին արտահայտել իրենց դիրքորոշումը՝ վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:



Այս հիմնարար սկզբունքից բխում է, որ բացասական միջամտող վարչական ակտը չպետք է անսպասելի «անակնկալ» լինի դրա հասցեատիրոջ համար: Լսումների ընթացքում վարչական մարմինը կարող է ներկայացնել բացասական որոշում կայացնելու իր մտադրությունը, նշել դրա պատճառները, մատնանշել այն փաստական հանգամանքները, որոնք բացահայտվել են, ինչպես նաև նրանք, որոնք չեն բացահայտվել կամ հերքվել են և այլն, որից հետո վարույթի մասնակիցը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու իր փաստարկները վարչական մարմնի դիրքորոշման վրա ազդելու նպատակով: Բացի ապագա վարչական ակտի հասցեատիրոջ նկատմամբ արդարության պահպանման անհրաժեշտությունը, վարչական լսումների մեկ այլ նշանակությունն այն է, որ վարչական մարմինը, լսելով վարույթի մասնակցին՝ կարող է ավելի արդյունավետ ապահովել վարույթի իրականացման բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը, ինչպես նաև գործի հանգամանքներն ի պաշտոնե բացահայտելու իր պարտականության կատարումը:

Համաձայն ՀՀ Վճռաբեկ դատարանի 26.12.2008 թ.-ի թիվ ՎԴ/0016/05/08 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումի, առանց լսումների միջամտող վարչական ակտի կայացումը հիմք է վարչական ակտը ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու համար:

ՀՀ Ղատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Բողոքաբերը գտնում է, որ սույն գործով կիրառելի է ՀՀ Վճռաբեկ դատարանի 26.12.2008 թ.-ի թիվ ՎԴ/0016/05/08 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները, որը սակայն Ղատարանի կողմից անտեսվել է, չնայած այն հանգամանքի, որ հայցվոր կողմը Ղատարանին առաջարկեց սույն գործով դատական ակտը կայացնելիս հիմք ընդունել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի հիշյալ որոշման իրավական վերլուծությունը:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ հայցվորի Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար այդպես կոչված հիմնավոր պատճառներով «վտանգավոր» համարվելու վերաբերյալ թիվ 2/2/3-714 գրությունը ԱԱԾ-ն պատասխանողին է ներկայացրել 30.05.2013 թ.-ին, այնուհետև պատասխանողը գրությունը ստանալու օրվանից 22 օր անց հայցվորին Հայաստանի Հանրապետությունում փոխստական ճանաչելու և ապաստան տրամադրելու մասին թիվ Բ-141/13-Ա որոշումն է կայացրել, որով հայցվորը ՀՀ-ում ճանաչվել է փոխստական և նրան տրամադրվել է ապաստան: Հաջորդիվ Պատասխանողը թիվ Բ-141/13-Ա որոշումը կայացնելուց հետո 21 օր անց նոր միայն կայացրել է վիճարկվող որոշումը:

Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ սույն գործով բացակայել է անհապաղ վարչական ակտ կայացնելու և իրականացված վարչական վարույթի ընթացքում լսումներ չանցկացնելու հիմքերը:

Պատասխանողը ոչ իրավաչափ գործելու արդյունքում խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջը, քանի որ պատասխանողը գործել է ՀՀ օրենսդրությամբ իր վրա դրաված հայեցողական լիազորությունների գերազանցմամբ, ըստ որի՝ Հայեցողական

լիազորությունն օրենքով վարչական մարմինն վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որեւէ մեկը (մաս 1-ին):

Հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, իրենց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ (մաս 2-րդ):


Վերոգրյալից ակնհայտ է նաև այն, որ պատասխանողի կողմից որոշումը կայացնելիս խախտվել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, համաձայն որի վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննարկումը բացահայտելով գործի բոլոր, այդ թվում վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Նշված իրավանորմը ենթադրում է, որ վարչական մարմինը պարտավոր է տվյալ վարույթով ապահովել գործին առնչվող բոլոր փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և անաչառ ըննարկում գործի բոլոր, այդ թվում վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու նպատակով:

Գործի բազմակողմանի ըննարկումն իրենից ներկայացնում է վարույթի առարկային առնչվող բոլոր հարցերի պարզաբանումը, իսկ յուրաքանչյուր հարց պետք է պարզաբանվի լրիվ ծավալով առանց որևէ հանգամանք բաց թողնելու և տվյալ գործին առնչվող բոլոր հարցերի համակցությամբ, որովհետև յուրաքանչյուր հարցի պարզաբանումն ըստ էության բացահայտում է գործի լրիվ ըննարկման նշանակությունը: Բացի այդ գործը պետք է ըննարկվի առկա բոլոր հարցերի հստակ լուծմանը համապատասխան օրենքի պահանջների հետ համադրմամբ: Ընդ որում, գործի բազմակողմանի ըննարկումը վարչական մարմնի պարտականությունն է, ինչը չի կարելի ասել պատասխանողի կողմից իրականացված վարչարարության մասին, հետևաբար այս սկզբունքի ապահովման նպատակով վարչական մարմինը վարույթի բազմակողմանիության ապահովման նպատակով ինքն է պարտավոր ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, մինչդեռ առկա փաստերի գնահատման արդյունքում պարզ է դառնում, որ պատասխանողը չի ապահովել նաև փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննարկումը:

Բողոքաբերը գտնում է, որ պատասխանողը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան վարչարարություն չիրականացնելու արդյունքում թույլ է տվել նաև ապացուցման բեռի և ապացուցման ստանդարտի սկզբունքների խախտում, որը վարչարարության ժամանակ կիրառման համար պարտադիր բնույթ է կրում, որպիսի չափորոշիչների կիրառման արդյունքում է վարչական վարույթն իրականացնող մարմինը պարզում առկա փաստերի և հանգամանքների արժանահավատությունն ու հիմնավորվածությունը և դրանց գնահատման չափանիշները:

Վերոնշվածից ակնհայտ է, որ պատասխանողը որոշումը կայացրել է «Փախստականների կարգավիճակի մասին», «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կրկնվեցիանների, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքների իմպերատիվ պահանջների խախտմամբ, ինչն էլ «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով որոշումն անվավեր ճանաչելու հիմք է հանդիսացել, անվավեր է առ ոչինչ



չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Հայցվորը կրկին արձանագրում է դատարանի նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումն թույլ տալու հանգամանքը, քանի որ սույն գործով չի իրականացրել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, չի կայացրել պատճառաբանված վճիռ:

Այսպիսով, վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն բողոքում նշված իրավական նորմերը դատարանի կողմից խախտելու հիմնավորումները և այն, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից սույն գործով կայացվելիք որոշումը միանշանակ կարող է էական նշանակություն ունենալ սույն գործի ելքի վրա, քանի որ դատարանի Վճռում նշված իրավական վերլուծությունները անտրամաբանական անհեթեթություններ են և դատարանի կողմից նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հանգամանքի անհերքելի ապացույցներ:

Ելնելով վերոգրյալից և համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի՝ բողոքաբերը խնդրել է վերաքննիչ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ վարչական դատարանի 14.02.2014 թվականի թիվ ՎԴ/7373/05/13 վճիռը և այն փոփոխել՝ հայցադիմումն ամբողջությամբ բավարարել:

3. Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է. «Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար»: Այդ տեսանկյունից ուսումնասիրելով գործի նյութերը, բողոքով ներկայացված հիմքերը և հիմնավորումները, առարկությունները բողոքին, վարչական դատարանի՝ Վճռում շարադրված վերլուծությունն ու ստացված եզրահանգումները՝ Վերաքննիչ դատարանը եզրահանգում է, որ բողոքով ներկայացված պահանջը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

1.30.05.2013 թվականի թիվ 2/2/3-714 գրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Ազգային Անվտանգության Ծառայություն ՀՀԳՎ պետ Ս. Մելքոնյանը հայտնել է, որ Սիրայի քաղաքացի Մուայադ Ռաֆիկի Աբբասը, ծնված 07.09.1980թ. պոտենցիալ վտանգ է ներկայացնում ՀՀ ազգային անվտանգությանը, ուստի ՀՀ-ում փախստականի կարգավիճակի տրամադրումը նպատակահարմար է մերժել:

2.12.07.2013 թվականի Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության «Սիրիայի Արաբական Հանրապետության քաղաքացի Մուայադ Ռաֆիկի Աբբասին Հայաստանի Հանրապետությունում տրամադրված ապաստանը դադարեցնելու մասին» թիվ Դ-17/13-Ա որոշման՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը 2013 թվականի հունիսի 21-ի թիվ Բ-141/13-Ա որոշմամբ Սիրիայի Արաբական Հանրապետության քաղաքացի Մուայադ Ռաֆիկի Աբբասը Հայաստանի Հանրապետությունում ճանաչվել է փախստական և ստացել ապաստան: Ծառայությունը «Փախստականների և ապաստանի մասին» և «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով, իր նախաձեռնությամբ, սույն թվականի հունիսի 27-ին հարուցել է վարչական վարույթ՝ Մուայադ Ռաֆիկի Աբբասին Հայաստանի Հանրապետությունում տրամադրված ապաստանը դադարեցնելու վերա-



բերյալ: ՀՀ կառավարության առընթեր Ազգային անվտանգության ծառայությունն իր 2013 թվականի մայիսի 30-ի թիվ 2/2/3-714 գրությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությանը հայտնել է, որ Սիրիայի քաղաքացի Մուսայադ Ռաֆիկի Աբբասը պոտենցիալ վտանգ է ներկայացնում ՀՀ ազգային անվտանգությանը:

2008թ. նոյեմբերի 27-ին ընդունված՝ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածը գրեթե տառացիորեն վերարտադրել է ժնկի կոնվենցիայի վերոհիշյալ դրույթը՝ իր առաջին մասում սահմանելով, որ փախստական է համարվում, ... այն օտարերկրյա քաղաքացին, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար *հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի* հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ:

Համաձայն «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ «1. Ապաստանը օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին Հայաստանի Հանրապետությունում շնորհված պաշտպանություն է, որը երաշխավորում է նրա նկատմամբ սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված սկզբունքի կիրառումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձանց՝ Կոնվենցիայով, սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով շնորհված բոլոր իրավունքները:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ապաստանը տարածվում է նաև այլ պետության կողմից փախստական ճանաչված օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի վրա, եթե նա սահմանված կարգով մուտք է գործել Հայաստանի Հանրապետության տարածք և ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ բնակության իրավունք տվող կացության որևէ կարգավիճակ:

3. Ապաստանի տրամադրումը պետք է ընթանա խաղաղ և մարդասիրական մթնոլորտում, և դա չպետք է վերածվի անբարյացակամ վերաբերմունքի, քանի որ դա չի ենթադրում որևէ քննադատություն փախստականի քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության կամ որևէ այլ երկրի հանդեպ, ե:

«Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի /այսուհետ նաև՝ Կոնվենցիա/ 33-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պայմանավորվող ոչ մի պետություն փախստականին չի վտարում կամ որևէ կերպ վերադարձնում («վերադարձնում այն երկիր, որտեղից եկել է») այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը վտանգ կսպառնար՝ իր ռասայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի պատկանելու կամ քաղաքական կարծիքի հարելու հիմքով:

2. Սույն դրույթի արտոնությունը, սակայն, չի կարող վկայակոչվել այն փախստականի կողմից, ով հիմնավոր պատճառներով վտանգավոր է համարվում իր գտնված երկրի անվտանգության համար, կամ ով, վերջնական դատավճռով դատապարտված լինելով բացառիկ լուրջ հանցագործության համար, **վտանգ է ներկայացնում այդ երկրի հասարակության համար:**»

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Փախստականին Հայաստանի Հանրապետությունում **տրամադրված ապաստանը դադարեցվում է, եթե նա հիմնավոր պատճառներով վտանգավոր է**



համարվում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար կամ դատապարտվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար:»

Վերոգրալ իրավամորմերով սահմանված է օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին Հայաստանի Հանրապետությունում ապաստան տրամադրելու միջոցով պաշտպանություն տրամադրու հնարավորությունը:

Սակայն ինչպես վերը նշված Կոնվեցիայի նորմերով, այնպես էլ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված է բացառություն չվերադարձվելիության սկզբունքից՝ տրամադրված ապաստանի դադարեցման իմպերատիվ պահանջը այն դեպքում, երբ փախստականը վտանգավոր է համարվում իր գտնված երկրի ազգային անվտանգության համար: Վտանգը պետք է սպառնա այն երկրի անվտանգությանը, որտեղ գտնվում է փախստականը:

«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմինը լիազոր մարմնի խնդրանքի հիման վրա աջակցում է վերջինիս ապաստան հայցողի անձի ինքնությունը պարզելու և ապաստանի ընթացակարգում ապաստան հայցողի կողմից ներկայացված փաստերի քննության հարցում, ինչպես նաև տալիս է եզրակացություն ապաստան հայցողի՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար հնարավոր վտանգ ներկայացնելու մասին:

«Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացությունն է, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:»:

Նույն օրենքի 2-ին հոդվածի համաձայն՝ ազգային անվտանգության մարմինները Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման համակարգի բաղկացուցիչ մասն են և իրենց իրավասության սահմաններում ապահովում են անձի, հասարակության ու պետության անվտանգությունը:

«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազոր մարմինը, անհատական ապաստանի դիմումի հետ կապված, հավաքում է ապաստան հայցողի կամ ցանկացած այլ շահագրգիռ կողմի տրամադրած բոլոր տեղեկությունները և դրանք սահմանված ձևով զետեղում է տվյալ ապաստան հայցողի անհատական գործի մեջ:

Սույն վարչական գործի փաստերի համաձայն՝ 30.05.2013 թվականի թիվ 2/2/3-714 գրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Ազգային Անվտանգության Ծառայության ՀՀԳՎ պետ Ս. Մելքոնյանը հայտնել է, որ Սիրայի քաղաքացի Մուայադ Ռաֆիկի Աբբասը, ծնված 07.09.1980թ. պոտենցիալ վտանգ է ներկայացնում ՀՀ ազգային անվտանգությանը, ուստի ՀՀ-ում փախստականի կարգավիճակի տրամադրումը նպատակահարմար է մերժել:

Վերոգրալից ելնելով՝ 12.07.2013 թվականին ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը կայացրել է «Սիրիայի վրաբնական Հանրապետության քաղաքացի Մուայադ Ռաֆիկի Աբբասին Հայաստանի Հանրապետությունում տրամադրված ապաստանը դադարեցնելու մասին» թիվ Դ-17/13-Ա որոշումը, որով վկայակոչելով ՀՀ կառավարության առընթեր Ազգային անվտանգության



ծառայությունն իր 2013 թվականի մայիսի 30-ի թիվ 2/2/3-714 գրությունը և ղեկավարվելով «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով որոշել է Սիրիայի քաղաքացի Մուայադ Ռաֆիկ Աբբասին Հայաստանի Հանրապետությունում տրամադրված ապաստանը դադարեցնել:

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ազգային անվտանգության ծառայությունը հանդիսանում է այն լիազոր մարմինը, որը ապահովելով անձի, հասարակության ու պետության անվտանգությունը՝ օրենքի հիման վրա իրավասու է ապաստան հայցող անձի ինքնությունը պարզելու և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար հնարավոր վտանգ ներկայացնելու մասին եզրակացություն տալու: Վերաքննիչ դատարանի գնահատման ազգային անվտանգության ծառայության կողմից տրված տեղեկությունը բավարար հիմք է եղել տրամադրված ապաստանը դադարեցնելու համար:

Ուստի Վերաքննիչ դատարանը գնահատում է ոչ հիմնավոր վերաքննիչ բողոքում նշված այն փաստարկը, որ «ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության 2013 թվականի մայիսի 30-ի թիվ 2/2/3-714 գրությունը, ինչպես պատասխանողի կողմից որոշումը կայացնելու համար իրականացված վարչարարության, այնպես էլ դատական քննության համար վերաբերելի ապացույց չի հանդիսացել»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը: Ապացույցներ են վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը /ցուցմունքը/, գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, ինչպես նաև պարզում է այս կամ այն ապացույցի վերաբերելիության հարցը:

Դատարանը, գնահատելով գործում առկա փաստերը, իրավացիորեն եզրակացրել է, որ «Պատասխանողը իրավաչափորեն նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայցվորը վտանգ է ներկայացնում ՀՀ ազգային անվտանգությանը և նկատի ունենալով, որ նշվածը հիմք է հանդիսանում փախստականի կարգավիճակի դադարեցման համար կայացրել է Հայցվորին Հայաստանի Հանրապետությունում տրամադրված ապաստանը դադարեցնելու մասին թիվ Դ-17/13-Ա որոշումը: Այսինքն՝ նման պայմաններում վերանում է «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի արտոնությունից օգտվելու Հայցվորի իրավունքը և պայմանավորվող պետության կողմից վտարելու և վերադարձի արգելքը, այնքանով, որքանով ստացված տեղեկությունների համաձայն վերջինս վտանգ է սպառնում Հայաստանի Հանրապետության համար, որի պայմաններում գործում է նույն կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասը»:



Վերոգրյալ իրավանորմերից, փաստերից, պատճառաբանություններից և եզրահանգումներից ելնելով՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ վերը նշված Վերաքննիչ դատարանի պատճառաբանության հաշվառմամբ՝ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի վերաքննիչ բողոքը ենթակա է մերժման:

Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ժգ» ենթակետի՝

«Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են.

ժգ) փախստականի կարգավիճակ հայցողները՝ փախստականի կարգավիճակ ստանալու մասին դիմումի մերժումը բողոքարկելու վերաբերյալ հայցերով և բողոքներով:»:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, և հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ժգ» ենթակետը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ և 146-րդ հոդվածները՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 145-րդ և 146-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Վերաքննիչ բողոքը մերժել՝ թիվ ՎԴ/7373/05/13 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2014 թվականի մարտի 14-ի վճիռը թողնել անփոփոխ:

Վերաքննիչ դատարանում գործի քննության հետ կապված դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՂՈՂ ԴԱՏԱՎՈՐ
Ք. ՄԿՈՅԱՆ



ԴԱՏԱՎՈՐ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ



ԴԱՏԱՎՈՐ
Գ. ՂԱՐԻԲՅԱՆ



Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտել « » 2014 թվականին:

ՆԱԽԱԳԱՂՈՂ ԴԱՏԱՎՈՐ

Ք. ՄԿՈՅԱՆ